

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

GOUVERNEMENT
D'ARMENIE OCCIDENTALE



BATI ERMENİSTAN
HÜKÜMETİ

ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

ԼՂՀ Նախագահ. Արցախեան հիմնախնդիրը Հայկական Հարցի մէկ կարեւոր բաղադրիչն է

Նախագահ Բակո Սահակեանը Հոկտեմբերի 29-ին այցելած է Մարտակերտի շրջանի Թալիշ գիւղ, ուր մասնակցած է Ապրիլեան քառօրեայ պատերազմի օրերուն Սիսեանի ջոկատի զոհուած ազատամարտիկներու յիշատակին տեղադրուած խաչքար-յուշարձանի բացման հանդիսաւոր արարողութեան:

Իր խօսքին մէջ Նախագահ Սահակեանը նշած է, որ այս պահին բոլորս համակուած ենք տարբեր զգացումներով. մէկ կողմէ կայ խոր թախիծ եւ տխրութիւն՝ քանի որ կը յիշենք մեր նահատակուած ընկերներն ու հարազատները, որոնց կերպարը միշտ կենդանի է մեր սիրտերուն մէջ, իսկ միւս կողմէ մենք լի ենք հպարտութեամբ՝ որ ունինք այդպիսի հերոս մարտիկներ, ովքեր իրենց խիզախութեամբ ու անձնուիրութեամբ պաշտպանեցին հարազատ ժողովուրդն ու պետութիւնը, եւ որոնց համար հայրենիքին ծառայելը ամենամեծ ու կարեւոր առաքելութիւնն էր իրենց կեանքի:

ԼՂՀ Նախագահը ընդգծած է, որ Սիւնեցիները՝ եւ մասնաւորապէս Սիսեանցիները միշտ ալ գործուն մասնակցութիւն ունեցած են հայրենիքի պաշտպանութեան գործին, եւ այդ առումով Արցախեան ազատամարտը բացառութիւն մը չէր, որուն ընթացքին անոնք պայքարած են թշնամիին դէմ, եւ իրենց անգնահատելի աւանդը բերած են մեր փառաւոր յաղթանակներու կերտման գործին:

Նախագահին իր յիշատակի խօսքով ի շարս այլ հարցերու՝ խօսած է նաեւ Արցախեան հիմնախնդրին մասին, որպէս Հայկական Հարցի (հայ ժողովուրդին տրուած բոլոր իրաւունքներուն, այդ շարքին՝ Հայաստան պետութեան իրականացման ու ձեւաւորման հարցի) կարեւոր մէկ բաղադրիչ, ինչը կուգայ հաստատելու, թէ Արցախեան հիմնախնդրի վերջնական եւ ամբողջական լուծումը կրնայ իրականացուիլ Հայկական Հարցի վերջնական լուծման գործընթացի ծիրին մէջ, որն ալ իր հերթին կ'ենթադրէ խորունկ եւ գիտակցուած համապարփակ մէկ համագործակցութեան գործընթացի սկզբնաւորում՝ հայկական հանրապետութիւններուն եւ պետականութեան բոլոր թելերուն միջեւ:

Նախագահը նշած է, թէ ինքն ուրախ է որ այսօր յիշատակի այս արարողութեանն իրենց միացած են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառոյցի եւ կառավարութեան պատասխանատուներ, այդ շարքին՝ Հանրապետութեան Նախագահը, Վարչապետը, Յատուկ առաքելութիւններով ու լիազօրութիւններով օժտուած Նախարարը:

Միջոցառման մասնակցած են ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը, պաշտոնատար այլ անձինք, ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետությունէն:

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն
Լրատուական բաժին**

01.11.2016 թ.







